Մասնաճյուղում ուսանողների մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքների

ԱՄՓՈՓՈՒՄ

30.03..2019թ.

2019 թվականի փետրվարին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 3 ֆակուլտետների (բնական գիտությունների, հումանիտար գիտությունների և տնտեսագիտության) շուրջ 9 մասնագիտությունների 1-ից 3-րդ կուրսերից 10 -ում անց են կացվեց մնացորդային գիտելիքի ստուգումներ: Ստուգումներն անց են կացվել որոշ դեպքերում մեկ դասընթացից, իսկ հիմնականում մասնագիտական մի քանի դասընթացների շրջանակներում: Ամբիոնները ստուգումների համար կիրառել են տարբեր ձևեր՝ թեստային, գրավոր և բանավոր:

Նշենք, որ սա մնացորդային գիտելիքի ստուգման առաջին փորձն էր և ամբիոնները ամենայն պատասխանատվությամբ էին մոտեցել ստուգման տարբերակներում ներառված հարցերի և խնդիրների բովանդակությանը: Կարևորվել էր մնացորդային գիտելիքի ստուգման նպատակը, այն է՝ բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը, վեր հանել ուսանողների ձեռքբերումները, գնահատել նրանց մասնագիտական հետագա գործունեության համար անհրաժեշտ հիմնարար գիտելիքների, ձևավորված կարողությունների և հմտությունների առկայության մակարդակը:

Մնացորդային գիտելիքի բարձր մակարդակի ապահովումը կարելի է դիտել որպես ուսումնական գործընթացի իրականացման որակի գնահատման խնդիր, իսկ մնացորդային գիտելիքի բարձր մակարդակը՝ որպես դասախոսի և ուսանողի համատեղ արդյունավետ աշխատանքի արդյունք: Մնացորդային գիտելիքը այն նվազագույն պաշարն է, որը ուսանողը պարտավոր է կուտակել՝ ելնելով կրթական ծրագրի ընթացիկ պահանջներից և իր հնարավորություններից:

Մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները հավաքագրվել են մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնում, քննարկվել են և վերլուծվել ըստ կուրսերի: Վերլուծության ժամանակ ուսանողների դրսևորած մնացորդային գիտելիքների արդյունքները համադրվել են մոդուլի (եթե ստուգումն անց է կացվել մեկից ավելի մասնագիտական դասընթացներից) կամ դասընթացի միջին գնահատականի և ուսանողի միջին որակական գնահատականի հետ, որը հնարավորություն է տվել յուրաքանչյուր ուսանողի համար պարզել նրա ձեռքբերումների դինամիկան:

Այդ արդյունքները վերլուծելուց և ըստ կուրսերի ամփոփելուց հետո ՄԿՈԱ բաժինը 2019թ. մարտի 19-ից 26-ը կազմակերպել է մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքների քննարկումներ ուսանողների հետ: Հանդիպում-քննարկումներին ներկա է եղել նաև մասնաճյուղի տնօրեն Ա. Ցուցուլյանը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, կրթական ծրագրերի ղեկավարները և դասախոսներ: Հանդիպումներն անց են կացվել առանձին ֆակուլտետներով: Հանդիպումների նպատակն էր ուսանողների հետ քննարկել արդյունքները, լսել նրանց կարծիքները ստուգման անցկացման ձևի, ժամանակի, բովանդակության և ընդհանրապես նրա կարևորության վերաբերյալ:

Արդյունքները ուսանողներին ներկայացվել են կուրսի համար ընդհանրական տեսքով, առանց անձնավորված արդյունքների:

Հարկ է նշել, որ որոշ կուրսերում մնացորդային գիտելիքի ստուգման համար ամբիոնների կողմից ընտրվել են մասնագիտական այնպիսի դասընթացներ կամ մոդուլներ, որոնք ուսումնասիրվել և ավարտվել են մնացորդային գիտելիքի ստուգումից 8 ամիս առաջ, կամ ընտրվել են 1-ին կուրսից մինչև ընթացիկ կիսամյակը ներառող և տրամաբանական շարունակություն հանդիսացող դասընթացներ:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել մի քանի կուրսեր, որոնք մնացորդային գիտելիքի ստուգումից ցուցաբերել են իրենց ընթացիկ առաջադիմությանը համապատասխան արդյունքներ, և նույնիսկ ավելի, քանի որ կազմվել են միջին բարդության տարբերակներ: Օրինակ, հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 3-րդ կուրսի «Հայոց պատմություն-1» և «Հայոց պատմություն-2» դասընթացներից, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1» դասընթացից, «Օտար լեզու և գրականություն»_մասնագիտության 3-րդ կուրսի «Ֆրանսերեն» («Ֆրանսերեն-1,2,3,4,5») մոդուլից ուսանողների դրսևորած մնացորդային գիտելիքները հիմնականում արտացոլել են ուսանողների ընթացիկ ձեռքբերումների մակարդակը, այսինքն համադրելի են միջին որակական գնահատականի հետ: Մյուս կուրսերում այդ արդյունքները համեմատաբար ցածր են եղել, որոնց վերաբերյալ քննարկումներում ուսանողները մեկնաբանել են արդյունքները, թվարկել են այն խնդիրները, որոնք խանգարել են արդյունավետ դրսևորել իրենց գիտելիքները: Մասնավորապես, ուսանողները խնդիր են տեսել ***անցկացման ժամկետի մեջ*** (ստուգումն անց է կացվել տվյալ մոդուլի ուսամնառությունից մոտ 8 ամիս անց), ***անցկացման ձևի մեջ*** (թեստային, գրավոր, թե բանավոր), եղան նաև այլ առաջարկներ:

Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներն առաջարկեցին մնացորդային գիտելիքի ստուգումն անցկացնել թեստային տարբերակով, իսկ հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողները և կրթական ծրագրերի ղեկավարները արդյունավետ համարեցին բանավոր հարցումը՝ որպես ուսանողի մտածողության ազատ դրսևորման ձև:

Հետաքրքիր էին նաև ուսանողների դիտարկումները տարբերակների բովանդակության, նրա մեջ ներառված հարցերի և խնդիրների վերաբերյալ: Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներն առաջարկեցին թեստերում ընդգրկել մի քանի դասընթացների թեմաներ, և լինեն միայն ընդհանրացնող և եզրահանգող հարցեր՝ առանց կոնկրետ բանաձևերի և մանրամասն տվյալների:

Եղան բազմաթիվ առաջարկներ մնացորդային գիտելիքի ստուգման անցկացման ժամկետի վերաբերյալ: Ուսանողներն առաջարկեցին մնացորդային գիտելիքի ստուգում անցկացնել 2-րդ կամ 3-րդ կուրսերում դասընթացը կամ մոդուլը ավարտելուց հետո 1-2 ամսվա ընթացքում:

Հանդիպումների ժամանակ ՄԿՈԱ բաժնի աշխատակիցները բացի ստուգման արդյունքներից ուսանողներին ներկայացնում էին նաև մնացորդային գիտելիքի ստուգման մեկ այլ առանձնահատկության մասին: Այն ուսանողի և դասախոսի համատեղ աշխատանքի ցուցանիշ լինելուց բացի նաև օգնում է ուսանողի ձեռքբերումների ամրապնդմանը և անցած ուսումնառության ընթացքում ձեռքբերածի վերականգնմանը:

Ուսանողներին ներկայացվեց գերմանացի հոգեբան Հերման Էբբինհաուզի «մոռացման կորը», որը նա ստացել է 1885թ.-ին մարդու հիշողության փորձարարական ուսումնասիրությունների հետևանքով: Ուղեղը մարդուն պաշտպանում է գերծանրաբեռնվածությունից և շարունակ ազատում է ոչ պիտանի տեղեկատվությունից: Հենց այդ պատճառով էլ նոր ստացած տեղեկատվությունը սկզբում ընկնում է ոչ թե երկարաժամկետ, այլ կարճաժամկետ հիշողության մեջ: Եթե դրանք մարդը չի կրկնում ու չի օգտագործում, արագ մոռացվում են:





Էբինհաուզը տարված էր «մաքուր» <u>հիշողության</u> ուսումնասիրմամբ, հիշողություն, որի վրա մտածողության ոչ մի գործընթացներ չեն ազդում: Ըստ նրա, արդեն իսկ առաջին ժամվա ընթացքում մոռացվում է ստացված ամբողջ տեղեկատվության մինչև 44 % -ը, անգիր անելուց 10 ժամ հետո հիշողության մեջ մնում է ընդամենը սովորածի 35%-ը: Հետագայում մոռացման գործընթացը դանդաղ է ընթանում և վեց օրից հիշողության մեջ մնում է սովորածի շուրջ 20% -ը, մոտավորապես նույնքան մնում է նաև մեկ ամիս անց:

Ուսանողներին մեկնաբանվեց այդ կորը և ներկայացվեց նրանից եզրակացությունը, այն է, որ արդյունավետ հիշելու համար անհրաժեշտ է կրկնել անցած նյութը: Հոգեբանները խորհուրդ են տալիս մի քանի անգամ կրկնել, յուրաքանչյուր նոր կրկնությունը վերականգնում է մոռացվածի որոշակի տոկոսը և փոքրացնում է նրա մոռանալու հավանականությունը:

Հոգեբանները նաև խորհուրդ են տալիս սովորել գիտակցված, քանի որ իմաստավորված նյութը 9 անգամ ավելի հեշտ է հիշվում, նրանք նաև նկատում են, որ ամենալավը հիշվում են նյութի սկզբում և վերջում եղած բառերը:

Հանդիպումների վերջում ՄԿՈԱ բաժնի աշխատակիցներն առաջարկեցին դեկաններին, ամբիոնների վարիչներին և կրթական ծրագրերի ղեկավարներին կազմակերպել հանդիպումներ ուսանողների և դասախոսների հետ և ՄԿՈԱ բաժին ներկայացնել հետագայում մնացորդային գիտելիքի ստուգման կազմակերպման ձևի, դասընթացների, պարբերականության, գնահատման և տարբերակների բովանդակության վերաբերյալ իրենց առաջարկները:

Հանդիպումները բավականին հետաքրքիր էին և բովանդակալից, հատկապես տպավորիչ էր ուսանողների ակտիվ մասնակցությունը և ոգևորիչ՝ նրանց տեսակետ արտահայտելու պատրաստակամությունը: Ուրախալի է, որ ուսանողները գտնում են, որ

մնացորդային գիտելիքի ստուգում անցկացնելը կարևոր է և այն պետք է դարձնել մշտական իրականացվող գործընթաց:

Ներկայացնենք տարբեր ֆակուլտետներում ամբիոնների կողմից ընտրված դասընթացներից կամ մոդուլներից մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքները: Վերլուծության ժամանակ համադրվել են կուրսի ընդհանրական արդյունքներն ըստ միջին որակական գնահատականի՝ **ՄՈԳ**, մոդուլի միջին գնահատականի՝ **ՄՄԳ** և մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքի՝ **ՄԳԱ**:

Տնտեսագիտության ֆակուլտետում մնացորդային գիտելիքի ստուգում է անցկացվել «Ֆինանսներ» կրթական ծրագրի «Տնտեսագիտության տեսություն-1» և «Տնտեսագիտության տեսություն-2» մոդուլից, «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության «Վիճակագրություն» դասընթացից, և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի «Զբոսաշրջության հիմունքներ» դասընթացից:

«Զբոսաշրջության հիմունքներ» դասընթացն ուսումնասիրած I կուրսի 4 ուսանողները բոլորը մասնակցել են մնացորդային գիտելիքի ստուգմանը և պետք է նշել, որ նրանց մոդուլի միջին գնահատականը (ՄՄԳ) մեծ է մնացորդային գիտելիքի արդյունքից (ՄԳԱ), իսկ ՄՈԳ-ը համեմատականորեն մոտ է ՄԳԱ-ին: Ավելի բարձր ՄԳԱ ունեցողների համար ՄՈԳ-ը էլ ավելի բարձր է եղել, իսկ ավելի ցածր ՄԳԱ ունեցողների համար ՄՈԳ-ը ավելի ցածր է եղել: ՄԳԱ-ն թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը, որ ուսանողները տվյալ առարկան յուրացրել են լավ:

N	Վիճակ	Ուս. քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	0	-	0%	-
2	Անբավարար	0	0	-	0%	0%
3	Բավարար	0	0	1	0%	0%
4	Լավ	2	2	1	50%	50%
5	**Գերազանց**	**2**	**2**	**2**	**50%**	**50%**

«Տնտեսագիտության տեսություն-1» և «Տնտեսագիտության տեսություն-2» մոդուլն ուսումնասիրած II կուրսի 17 ուսանողներից մասնակցել են 10-ը: Նշենք, որ մնացորդային գիտելիքի ստուգում անց է կացվել այնպիսի դասընթացներից, որոնք ուսումնասիրվել են 8 ամիս առաջ, դրա արդյունքում ՄԳԱ գնահատականները եղել են շատ ցածր: Այսինքն, արդյունքը փաստում է, որ ժամանակի ընթացքում ուսանողները մոռացել են տվյալ դասընթացից ձեռք բերած գիտելիքները, դրա ապացույցն է նաև 17 և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողների ստացած ցածր գնահատականներ:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	7	-	41%	-
2	Անբավարար	0	8	-	47%	80%
3	Բավարար	4	2	2	12%	20%
4	Լավ	4	0	6	0%	0%
5	**Գերազանց**	**2**	**0**	**2**	**0%**	**0%**

«Վիճակագրություն» դասընթացն ուսումնասիրած III կուրսի 23 ուսանողներից մասնակցել են 14-ը: Այստեղ նույնպես մնացորդային գիտելիքի ստուգում անց է կացվել այնպիսի դասընթացից, որն ուսումնասիրվել է 8 ամիս առաջ, և այստեղ նույնպես ՄԳԱ գնահատականները եղել են շատ ցածր: Արդյունքները ցույց են տալիս, որ չնայած ցածր, սակայն կուրսը պահպանել է դրական գնահատականները. այսինքն ամբողջ կուրսի 60%-ը ստացել է դրական գնահատական, որը ինչ-որ իմաստով կարելի է համարել լավ արդյունք:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	9	-	39%	-
2	Անբավարար	0	0	-	0%	0%
3	Բավարար	7	14	8	61%	100%
4	Լավ	6	0	5	0%	0%
5	**Գերազանց**	**1**	**0**	**1**	**0%**	**0%**

Ամփոփելով տնտեսագիտության ֆակուլտետի արդյունքները կարելի է նշել, որ 1-ին կուրսում դրանք բարձր են, սպասելի և բնութագրում են ուսանողների և դասախոսների համատեղ լավ աշխատանքի մասին, իսկ 2-րդ և 3-րդ կուրսերի արդյունքները գոհացուցիչ չեն, այստեղ իհարկե իր ազդեցությունն է ունեցել դասընթացի ավարտելու և մնացորդային գիտելիքի ստուգման միջև ընկած բավականչափ մեծ ժամանակահատվածը: Սա, իհարկե մեկ անգամ ևս բացահայտում և հիմնավորում է այն փաստը, որ ուսանողների մոտ ձեռք բերված գիտելիքները խորը նստվածք չեն տալիս, և նրանք հնարավորություն չեն ունեցել մեկ անգամ ևս այլ դասընթացի կամ ինքնուրույն աշխատանքների շրջանակներում անդրադարձ կատարելու նախորդ գիտելիքներին:

Այսինքն, մնացորդային գիտելիքի ստուգում անցկացնելը հնարավորություն է տալու ուսանողին վերանայել իր ձեռքբերումները և ամրապնդել դրանք:

Բնագիտական գիտությունների ֆակուլտետում մնացորդային գիտելիքի ստուգում է անցկացվել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի «ԷՀՄ և ծրագրավորում-1» և «ԷՀՄ և ծրագրավորում-2» դասընթացներից:

«ԷՀՄ և ծրագրավորում-1» դասընթացն ուսումնասիրած 1-ին կուրսի 20 ուսանողներից ստուգմանը մասնակցել է 17-ը: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ցածր (բայց դրական) ՄՄԳ ունեցողների մոտ ՄԳԱ-ն նույնպես եղել է շատ ցածր (դա վկայում է այն մասին, որ սովորաբար դասախոսները վատ սովորողներին դրել են ուղակի դրական գնահատական): Բարձր ՄՄԳ ունեցողների համար ՄԳԱ-ն եղել է էլ ավելի բարձր, ՄՈԳ-ի հետ համեմատած՝ նորից բարձր:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	3	-	15%	-
2	Անբավարար	5	11	-	55%	64%
3	Բավարար	11	1	15	5%	6%
4	Լավ	4	3	2	15%	18%
5	**Գերազանց**	**0**	**2**	**0**	**10%**	**12%**

«ԷՀՄ Ծրագրավորում-2» դասընթացն ուսումնասիրած II կուրսի 23 ուսանողներից ստուգմանը մասնակցել է 20-ը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են հետևյալի մասին, որ բարձր ՄՄԳ ունեցողներն արդարացրել են սպասելիքները՝ ստանալով բարձր ՄԳԱ, իսկ ցածր ՄՄԳ ունեցողների դեպքում ՄԳԱ-ն եղել է շատ ավելի ցածր: Այսինքն, կարելի է կատարել հետևություն, որ այն ուսանողները, ովքեր հետաքրքրված են ծրագրավորումով, բավականին լավ յուրացրել են դասընթացը, ձեռք են բերել համապատասխան գիտելիքներ և հմտություններ, մյուսների համար կամ դասընթացը դժվար ընկալելի է՝ իրենց ընդունակություններից բարձր պահանջներով, կամ ուղղակի ծույլ են, չհետաքրքրված են այլն:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	3	-	13%	-
2	Անբավարար	5	14	-	60%	70%
3	Բավարար	11	0	16	0%	0%
4	Լավ	4	4	7	18%	20%
5	**Գերազանց**	**3**	**2**	**0**	**9%**	**10%**

Ամփոփելով բնական գիտությունների ֆակուլտետում մնացորդային գիտելիքների ստուգումից ուսանողների ձեռք բերած արդյունքները կարելի է ասել, որ դրանք ցածր են, մեծամասնությունը՝ մոտ 65% ստացել է անբավարար, իսկ մնացածը լավ, շատ քիչ մասը գերազանց:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում մնացորդային գիտելիքի ստուգում է անցկացվել «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության «Անգլերեն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի «Ֆրանսերեն», «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1», «Պատմություն» կրթական ծրագրի «Հայոց պատմություն» և «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Ընդհանուր հոգեբանություն» դասընթացներից:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության «Անգլերեն» դասընթացն ուսումնասիրած 2-րդ կուրսի 23 ուսանողներից մնացորդային գիտելիքների ստուգմանը մասնակցել են 21-ը: Արդյունքները ցույց են տվել, որ հիմնականում ուսանողները ստացել են մոդուլից ստացած գնահատականին մոտ գնահատականներ, իսկ շեղումները բնութագրում են նյութի որոշակի չափով մոռացությունը:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	2	-	9%	-
2	Անբավարար	0	3	-	13%	14%
3	Բավարար	7	12	5	52%	57%
4	Լավ	11	6	14	26%	29%
5	**Գերազանց**	**3**	**0**	**2**	**0%**	**0%**

Ֆրանսերեն լեզու և գրականություն կրթական ծրագրի «Ֆրանսերեն» դասընթացն ուսումնասիրած III կուրսի 19 ուսանողներից գնահատմանը մասնակցել են 17-ը: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ նույնպես ուսանողները

հիմնականում ստացել են մոդուլից ստացած գնահատականին մոտ գնահատականներ՝ փոքր շեղումներով, և արդյունքները միանշանակ արտացոլում են ուսանողների գիտելիքները:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	2	-	11%	-
2	Անբավարար	0	0	-	0%	0%
3	Բավարար	7	4	6	21%	24%
4	Լավ	3	8	6	42%	47%
5	**Գերազանց**	**7**	**5**	**5**	**26%**	**29%**

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1» դասընթացն ուսումնասիրած III կուրսի 14 ուսանողները մասնակցել են գնահատմանը և կարելի է ասել, որ արդյունքները հիմնականում ցածր են ՄՄԳ-ից, ընդ որում մոդուլից բարձր գնահատական ունեցող մի շարք ուսանողներ ստացել են շատ ցածր գնահատականներ:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	0	-	0%	-
2	Անբավարար	0	4	-	29%	29%
3	Բավարար	5	3	6	21%	21%
4	Լավ	4	4	5	29%	29%
5	**Գերազանց**	**5**	**3**	**3**	**21%**	**21%**

«Պատմություն» կրթական ծրագրի «Հայոց պատմություն» մոդուլը («Հայոց պատմություն-1,2») ուսումնասիրած III կուրսի 11 ուսանողները մասնակցել են գնահատմանը: Ստուգումից ստացած գնահատականները ցույց են տալիս, որ դրանք գրեթե նույնն են, կամ կարելի է ասել հավասար են ՄՄԳ վերջին գնահատականին:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	0	-	0%	-
2	Անբավարար	0	0	-	0%	0%
3	Բավարար	7	5	7	46%	46%
4	Լավ	3	4	2	36%	36%
5	**Գերազանց**	**1**	**2**	**2**	**18%**	**18%**

«Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Ընդհանուր հոգեբանություն» դասընթացն ուսումնասիրած I կուրսի 17 ուսանողները մասնակցել են մնացորդային գիտելիքի ստուգմանը: Այստեղ արդյունքների ուսումնասիրությունը բավականին խնդիրներ է առաջ բերում, մասնավորապես այն հանգամանքը, որ բարձր ՄՄԳ և ՄՈԳ ունեցող մի շարք ուսանողներ ստացել են ցածր ՄԳԱ, իսկ ցածր ՄՄԳ և ՄՈԳ ունեցող մի շարք ուսանողներ ստացել են բարձր ՄԳԱ: Այստեղ մի գուցե դժվար է ինչ որ եզրակացություն կատարել, անհասկանալի է, կամ ձեռք չեն բերվել համապատասխան գիտելիքներ, կամ որոշ

ուսանողներ հնարավորություն են ունեցել ստուգման ժամանակ օգտվել տարբեր միջոցներից և այլն: Ընդհանուր առմամբ, կուրսի համար ՄԳԱ գնահատականները հիմնականում պատկերով իրար նման են:

N	Վիճակ	Քանակը ըստ			Առաջադիմությունը (%)	
		ՄՄԳ	ՄԳԱ	ՄՈԳ	Ընդհանուր	Մասնակիցների
1	Չեն մասնակցել	-	0	-	0%	-
2	Անբավարար	0	0	-	0%	0%
3	Բավարար	11	10	11	59%	59%
4	Լավ	1	5	5	29%	29%
5	**Գերազանց**	**5**	**2**	**1**	**12%**	**12%**

Ամփոփելով հումանիտար գիտությունների ֆակուլտետի արդյունքները կարելի է ընդհանրացնելով ասել, որ ֆակուլտետի II կուրսերի մոտ հիմնականում ցածր գնահատականներ են, մեծամասնությունը՝ մոտ 66% ստացել է բավարար, իսկ մնացածը լավ: III կուրսերի ուսանողները հիմնականում ստացել են լավ գնահատականներ:

Հանդիպումներից հետո բաժինը առաջարկել էր դեկաններին, ամբիոնների վարիչներին և կրթական ծրագրերի ղեկավարներին կազմակերպել հանդիպումներ ուսանողների և դասախոսների հետ և ՄԿՈԱ բաժին ներկայացնել հետագայում մնացորդային գիտելիքի ստուգման կազմակերպման ձևի, դասընթացների, պարբերականության, գնահատման և տարբերակների բովանդակության վերաբերյալ իրենց առաջարկները: Մասնավորապես, նրանց առաջադրվել էր մի քանի հարցեր.

1. Ի՞նչ ձևով է հարմար անցկացնել Ձեր ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումը (գրավոր, բանավոր, թեստային կամ այլ տարբերակներ):
2. Մնացորդային գիտելիքի ստուգումը հարմար է անցկացնել մեկ դասընթացից, թե՞ մի քանի դասընթացների համախմբումով (մոդուլով):
3. Ո՞ր կուրսերում և ե՞րբ է հարմար անցկացնել ստուգումը (առարկան/մոդուլը ավարտելուց հետո որքան ժամանակից հետո՝ հստակ նշել ժամկետը):
4. Քանի՞ հարց պետք է պարունակի ստուգման տարբերակը:
5. Առաջարկված տարբերակի քանի՞ տոկոսի կատարումը կարելի է համարել դրական:
6. Պե՞տք է արդյոք ուսանողներին նախորոք տեղեկացնել մնացորդային գիտելիքի ստուգման ժամանակացույցի մասին:
7. Ի՞նչ չափանիշներով պետք է գնահատվի ուսանողի մնացորդային գիտելիքը:

Նշենք, որ գրեթե բոլոր ամբիոններից կատարվել են հետաքրքիր, իրենց դասընթացների համար ընդունելի և կիրառելի առաջարկներ, որոնք ամփոփ ունեն հետևյալ բովանդակությունը.

1. Մնացորդային գիտելիքների ստուգում (ՄԳՍ) անցկացնել քննաշրջանից որոշ ժամանակ անց՝ հենց քննության հարցերով:
2. Մնացորդային գիտելիքների ստուգումն անց կացնի տվյալ դասընթացը վարող մեկ այլ դասախոս՝ իր կազմած հարցաշարով:
3. Մնացորդային գիտելիքների ստուգման ժամանակ որպես դիտորդներ ներկա գտնվեն այլ դասախոսներ:

4. Ավելի նպատակահարմար է 2-րդ կիսամյակի համար ՄԳՍ անցկացնել հաջոր ուստարվա սեպտեմբերին, իսկ 1-ին կիսամյակի համար՝ ընթացիկ ուստարվա փետրվարին։
5. Նպատակահարմար է ՄԳՍ անցկացնել II և III կուրսերում՝ 2 անգամ, յուրաքանչյուր քննաշրջանի ավարտից հետո (կետ 4), IV կուրսում անցկացնել միայն սեպտեմբերին։
6. ՄԳՍ անցկացնել այնպիսի առարկաների համար, որոնք ուսումնասիրվել են նախորդ կիսամյակում։
7. Նույն քննաթերթով ՄԳՍ անցկացնել տվյալ առարկայի ընթացիկ ուստարվա կուրսում և նախորդ ուստարվա նույն կուրսում՝ համեմատական գնահատականներ ստանալու համար։
8. ՄԳՍ անցկացնել տվյալ դասընթացի քննական տոմսերով կամ քննական հարցաշարից ընտրված հարցերով։

Առարկաների բնույթից կախված մնացորդային գիտելիքների ստուգման ձևի համար տարբեր ամբիոններ կատարել են տարբեր առաջարկներ, մասնավորապես, առաջարկվել են և՛ թեստային, և՛ գրավոր, և՛ բանավոր տարբերակները, նույնիսկ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնն առաջարկել է թեստային ստուգումներն իրականացնել **Moodle** միջավայրում՝ թեստերի տարբեր տիպերի ընդգրկմամբ, իսկ ծրագրավորման առարկաների համար՝ ստուգումն անցկացնել համակարգչային սրահում՝ քննաթերթի մեջ ներառելով աշխատող ծրագրային կոդի ստեղծման պահանջ։

Օրինակ,

- ✓ ***Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության*** ամբիոնն իր դասընթացներից ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման համար առաջարկել է թեստայի կամ գրավոր տարբերակը, հարցատոմսում 4 հարց և գտնում է, որ ուսանողի արդյունքը կարելի է համարել դրական, եթե նա հաղթահարել է հարցատոմսի 50%-ը և ավելին։
- ✓ ***Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների*** ամբիոնը նույնպես առաջարկում է թեստային, գրավոր կամ համակարգչով լուծման տարբերակները, հարցատոմսում 3 հարց, սակայն գտնում է, որ արդյունքը կարելի է համարել դրական, եթե ուսանողը հաղթահարել է հարցատոմսի 70%-ը և ավելին։
- ✓ ***Անգլերեն լեզվի և գրականության*** ամբիոնն առաջարկել է ստուգումն անցկացնել մի քանի դասընթացների համախմբությամբ, իրականացնել թեստային ստուգում՝ թեստում 40-50 հարց և արդյունքը համարել դրական, եթե ուսանողը հաղթահարել է հարցատոմսի 50%-ը և ավելին։
- ✓ ***Ֆրանսերեն լեզվի և գրականության*** ամբիոնն առաջարկել է ստուգումն անցկացնել մի քանի դասընթացների համախմբությամբ, իրականացնել թեստային ստուգում՝ թեստում 80 հարց և արդյունքը համարել դրական, եթե ուսանողը ճիշտ պատասխանել է 32 հարցի։
- ✓ ***Հայոց լեզվի և գրականության*** ամբիոնը գտնում է, որ իր դասընթացներից ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումն արդյունավետ կլինի, եթե այն անցկացվի բանավոր, հարցատոմսում 3 կամ 4 հարց, և արդյունքը համարել դրական, եթե ուսանողը հաղթահարել է հարցատոմսի 60%-ը և ավելին։
- ✓ ***Մանկավարժության և հոգեբանության*** ամբիոնն առաջարկում է մնացորդային գիտելիքի ստուգում անցկացնել այն ձևով, որով անց է կացվել ընտրված դասընթացի քննությունը,

1-2 հարց պարունակով հարցատոմսով, իսկ հարցերը լինեն այնպիսինը, որ բացահայտեն ուսանողի ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, և գնահատել ըստ այդ դասընթացի գնահատման չափանիշների:

- ✓ ***Ընդհանուր տնտեսագիտության*** ամբիոնն առաջարկում է մնացորդային գիտելիքների ստուգումն իրականացնել 1-ինից 3-րդ կուրսերում, 1-ին և 2-րդ կուրսերում՝ բանավոր հարցման եղանակով (1-ական հարց յուրաքանչյուր դասընթացից) և ուսանողի արդյունքը համարել դրական, եթե նա հարցի բնութագրական հասկացությունը (հասկացությունները) ճիշտ է ներկայացրել, իսկ բարձր գնահատականը կախված կլինի հարցի լիարժեք ներկայացման աստիճանից, 3-րդ կուրսեցիներին՝ առաջադրանք 2 էջի սահմանում, որով պետք է բացահայտել ուսանողի ոչ միայն տեսական, այլ նաև տեղեկատվության մշակման և վերլուծելու կարողությունները:
- ✓ ***Տուրիզմի կառավարման և մշակութաբանության*** ամբիոնը գտնում է, որ դասընթացներից կախված մնացորդային գիտելիքների ստուգումը կարելի է անցկացնել թեստային կամ գործնական խնդիրների միջոցով, անցկացնել 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում՝ տվյալ կուրսի առանցքային դասընթացներից, թեստը կարող է պարունակել 10-20 հարց (համակցված դասընթացների քանակից կախված), իսկ գործնականի դեպքում՝ 3-ից ոչ ավել առաջադրանք: Առաջարկվում է ուսանողի արդյունքը համարել դրական, եթե նա հաղթահարել է հարցատոմսի կամ թեստի 40%-ը և ավելին:
- ✓ ***Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի*** ամբիոնն առաջարկում է մնացորդային գիտելիքի ստուգումն անցկացնել համակարգչային տարբերակով՝ AutoCAD ծրագրի միջոցով (առավել հարմար գործիքների միջոցով), գործնական առաջադրանքի տեսքով՝ (կլաուզուրա), 2-րդ և 3-րդ կուրսերի մի քանի մասնագիտական դասընթացների համախմբումով, հարցատոմսը պետք է պարունակի 1-ական առաջադրանք, և 50%-ից ավելին կատարելու դեպքում ուսանողի արդյունքը կարելի է համարել դրական:
- ✓ Գծանկարի,գունանկարի և քանդակի ամբիոնն առաջարկում է մնացորդային գիտելիքի ստուգումն անցկացնել գործնական առաջադրանքի տեսքով (տարբերակներում 2 առաջադրանք), 2-րդ և 3-րդ կուրսերի մի քանի մասնագիտական դասընթացների համախմբումով, ուսանողների մնացորդային գիտելիքները գնահատել 20 բալանոց սանդղակով, գնահատելով ուսանողի հետևյալ կարողությունները՝ կառուցման գլխավոր առանձնահատկությունների կիրառում (կամպանովկա), գունային ներդաշնակ համադրության կիրառում (կամպանովկա), ծավալային ընկալում (քանդակ):

Մնացորդային գիտելիքի անցկացման ժամկետների հետ կապված ամբիոններից եղել են տարբեր առաջարկներ, բայց բոլորը գտնում են, որ ուսանողին ստուգումից գոնե մեկ շաբաթ առաջ պետք է իրազեկել:

Նշենք, որ ամբիոններից առաջարկներ են եղել նաև մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքների մշակման համար տրամադրվող տվյալների և մշակման ձևի վերաբերյալ: Բաժինը տվյալները հավաքագրել է հետևյալ ձևաչափով.

	Անուն ազգանուն	Մոդուլի միջին գնահատականը (ՄՄԳ)	Մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքը (ՄԳԱ)	Միջին որակական գնահատական (ՄՈԳ)
1.				
2.				

Նրանք առաջարկում են ՄԳՍ այս թերթիկի վրա անպայման նշել կուրսի բոլոր ուսանողների անունները, անկախ նրանից մասնակցել են ստուգմանը, թե ոչ, և չմասնակցած ուսանողին նշել «-» -ով, իսկ մասնակցած և միավոր չհավաքածին՝ «0»-ով: Նպատակն այն է, որ արտացոլվի կուրսի ընդհանուր առաջադիմությունը, անհրաժեշտությամբ դեպքում պարզաբանվի չմասնակցելու պատճառները, օրինակ, խուսափել է արդյո՞ք ուսանողը մասնակցել ստուգմանը, թե՞ բացակայելու համար հարգելի պատճառներ են եղել և այլն:

Դասախոսներն առաջարկում են գնահատման թերթիկի վրա նշել մոդուլի մեջ ներառվող բոլոր առարկաների գնահատականները (ինչպես օրինակ «Հայոց պատմություն-1,2»), ոչ թե միայն մոդուլի միջին գնահատականը: ՄԳՍ անցկացնել մոդուլի համար, ոչ թե առանձին առարկայի համար, այլ նախընտրելի է ինչքան հնարավոր է շատ դասընթացներ ներառող մոդուլների համար (ինչպես օրինակ, «Հայոց պատմություն-1,2,3,4,5»):

Բաժինը հավաքագրել է բոլոր առաջարկները, որոնց հիման վրա կկազմվի մնացորդային գիտելիքի ստուգման ընթացակարգ:

Կից ներկայացված են վերը նշված դասընթացներից և մոդուլներից մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին